ԱԼՊԻՆԻԶՄԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ARMENIAN MOUNTAINEERING &
HIKING FEDERATION

АРМЯНСКАЯ ФЕДЕРАЦИЯ АЛЬПИНИЗМА И ГОРНОГО ТУРИЗМА

г. Ереван ул. Арцаха 1
Yerevan Artsakh str.1
email: info@armalp.am,

mob: (+374 98) 911 000
tel: (+374 10) 434 911
www.armalp.am

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի

և սպորտի նախարար Վ. Դումանյանին

Նախարարի տեղակալ՝ Կ. Գիլոյանին

«Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիան» գործում է 2011թ.-ից: Այս տարիների ընթացքում փոխգործակցության հուշագրեր են ստորագրվել Ռուսաստանի Դաշնության ալպինիզմի ֆեդերացիայի և Իրանի Իսլամական Հանրապետության ալպինիզմի և սպորտային մագլցման ֆեդերացիայի հետ:

«Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիան» սերտ համագործակցում է ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության և Տուրիզմի կոմիտեի հետ:

«Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիան» ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ճանաչվել է որպես ազգային ֆեդերացիա:

«Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիային» կից գործում են, որոնք իրենց գործունեությամբ մեծ ներդրում ունեն պատանիների և երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խրախուսման, հայրենաճանաչության, բնության պահպանության կարևորության տարածման գործում:

Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի միջև պատերազմը ցույց տվեց, որ երիտասարդության շրջանում շատ կարևոր էր լեռնային պատրաստությունը, կողմնորոշումը, բնական արգելքների հաղթահարման կարողությունը, ինչը կարևոր է, ոչ միայն ազգային անվտանգության հարցի կարգավորման, այլ նաև առողջ ապրելակերպի և սպորտի տարածման հարցում: Կարծում ենք, որ շատ կարևոր է հանրակրթական դպրոցներում սովորող երեխաների հետ անցնել նման պատրաստություն և նրանց ներգրավել արշավներին:

Ցանկանում ենք ընդգծել, որ «Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիան» 2016թ.-ից ունի «4 Գագաթ» մանկակապատանեկան լեռնային ակումբ, որտեղ երեխաները և պատանիները նախ ստանում են վերը նշված հմտությունների վերաբերյալ գիտելիքներ և ժամանակի ընթացքում ներգրավվում հետիոտն արշավներին և լեռնային

վերելքներին: 5 տարիների փորձը հաստատում է այս ուղվածությունը դպրոցներում ներմուծելու կարևորությունը, ինչը հաստատվում է նաև հետաքրքված անձանց աճով:

Հասկանալով նշվածի իրագործման համար անհրաժեշտ են երկարաժամկետ ծրագրեր, մասնավորապես ֆիզիկական պատրաստության և սպորտի ծրագրային չափորոշիչային փոփոխություններ, այդուհանդերձ գտնում ենք, որ նշված ծրագիրը կարելի է իրագործել հրատապ ձևաչափով, որի մանրամասները պատրաստ ենք քննարկել հանդիպման ընթացքում:

Նախկինում այս հարցով ևս դիմումներ ներկայացվել են, որոնք սակայն կյանքի չեն կոչվել: Այս հարցով մեկ անգամ ևս դիմելու պատճառ հանդիսացավ մամուլում շրջանառվող այն տեղեկությունը, որ այս տարվա դեկտեմբերից հանրապետության մի շարք դպրոցներում իրականացվելու է «Դահուկային սպորտը դպրոցում» ծրագիրը՝ ձմռան ընթացքում ֆիզկուլտուրայի դասերը փոխարինելով դահուկային պատրաստության դասերով:

Ողջունելով և չթերագնահատելով դահուկային սպորտի նշանակությունը, հարկ ենք համարում սակայն նշել, որ հետիոտն արշավը և լեռնային վերելքները ունեն երկարատև և բազմակողմանի ազդեցություն աշակարտների վրա, ինչպես գիտելիքի, այնպես էլ դաստիարակության և մարզական վիճակի բարելավման տեսանկյունից, պահանջում են ավելի քիչ տեխնիկական միջոցների կիրառում:

Հետիոտն արշավները և լեռնային վերելքները.

1. միջոց են բացահայտելու Հայաստանը և հայրենի բնությունը, պատմամշակության արժեքները, ինչն էլ նպաստում է հայրենասիրության մեծացմանը,
2. օգնում են հոգատար լինել բնության հանդեպ, անտարբեր չմնալ բնապահպանական խնդիրներին և չախտոտել այն,
3. այն բոլոր մասնակիցներից պահանջում է խորը գիտելիքներ, գործնական հմտություններ, էքստրեմալ պայմաններում ճիշտ գործելու կանոնների իմացություն,
4. փոխօգնություն, փորձությունները և դժվարությունները միասին անցնելն են,
5. լարված աշխատանք է, կարգուկանոն, ռեժիմ,
6. տեսական գիտելիքները և գործնական հմտությունները իրականում փորձարկելու լավագույն ձևն է,
7. օգնում է ձևավորել ամուր կամք, դիմացկունություն և համբերություն և այլն,
8. բարձրացնում է ֆիզիկական պատրաստության մակարդակը և այլն:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ «Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիան» ունի մշակած տեսական նյութեր, որոնք կարող են կիրառվել կրթական ծրագրերում:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք կազմակերպել հանդիպում ծրագիրն առավել մանրամասն ներկայացնելու համար:

Ալպինիզմի և լեռնային տուրիզմի
Հայկական ֆեդերացիայի նախագահ՝ **Սուրեն Դանիելյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
ALPINISM AND MOUNTAIN TOURISM FEDERATION OF ARMENIA
«ԱՐՄԱՀԱՆՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ»
non-governmental organization
00454062